I

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
85-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՈՅԱՆ

Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում դաժան հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի ճակատագրում և վերածվեց չսպիացող վերքի նրա ազգային մարմնի վրա:

Դարեր շարունակ թուրքական տիրապետության ու հալածանքների տակ գտնվող արևմտահայերի զանգվածային կոտորածներն սկսվեցին XIX դարի 70-ական թվականների վերջերին: 1878 թ. Բեռլինի վեհաժողովից հետո, որտեղ առաջին անգամ Հայկական հարցը միջազգային դիվանագիտության քննարկման առարկա դարձավ, թուրքական իշխանությունները հայոց ցեղասպանությունը հռչակեցին որպես պետական քաղաքականություն:

Եվրոպական տերությունների անունից Մեծ Բրիտանիայի վարչապետ Սոլսբերիի արած հայտարարությունը, թե «հայերի շահերը պետք է վերցվեն պաշտպանության տակ», Թուրքիայում ընկալվեց որպես երկրին սպառնացող վտանգի ահազանգ: Մեծ վեզիր Քյամիլ փաշան առանց վարանելու հայտարարեց, որ ո՛չ Անգլիան և ո՛չ էլ Թուրքիան «Հայաստան» բառը լսել իսկ չեն ուզում և Հայկական հարցի լուծման միակ միջոց են համարում հայերի ֆիզիկական իսպառ բնաջնջումը Թուրքիայում: Փաշան այդ ոճրածին ծրագրի իրականացման նպաստավոր պայման էր համարում այն հանգամանքը, որ հայ ազգը «ոչ զենք ունի, ոչ զինվորություն և ոչ էլ պաշտպան»: Նա հոխորտալից հայտարարեց, որ հայերի բնաջնջումից հետո, եթե «քրիստոնյա Եվրոպան կրոնակից մը փնտրե, չի գտնե տաճկական Ասիոյ մեջ...»[1]:

Անգլիական իշխանությունները աննկատ թողեցին այդ աննախադեպ հայտարարությունը, իսկ հայ գործիչներն ու մտավորականները անհոգաբար հայտարարեցին, թե «Եվրոպա մեծ դատավորը» թույլ չի տա թուրքերին իրագործելու այդ դիվային ծրագիրը:

... Անցան տասնամյակներ և մեծանուն պատմաբան Լեոն դառնությամբ նշեց, որ այդ ծրագիրն իրագործվել է, որ «այժմ Թուրքաց Հայաստան չկա: Նա դարձել է մի վիթխարի գերեզմանոց, որի վրա հավիտենապես արձանագրված է «Եվրոպայի զոհը»:

Հայոց կոտորածները սաստկացան XIX դարի 90-ական թվականներին: 300 հազար հայեր թուրքական յաթաղանի զոհ դարձան: Այդ իրողությունը հաստատող բազմաթիվ փաստաթղթեր են պահվում Լոնդոնի «Public Record Office»*-ում*[2] *և այլ երկրների արխիվներում:*

---

1 *Տե՛ս «Փորձ», հ. 7-8, Տփխիս, 1879, էջ 204-205:*
2 Public Record Office (London), FO 608/77.

Եվրոպական տերությունների կառավարությունները հանցավոր անտարբերությամբ անցան այս եղեռնագործության կողքով, բավարարվելով օգում ձեռքեր թափահարելով: Դա չէր կարող չխրախուսել այդ կոտորածների կազմակերպիչներին: Այդ մասին է վկայում, օրինակ, Արևմտյան Հայաստանում անգլիական գործակալ Ուիլյամ Ռամսեյի իր կառավարությանը 1897 թ. հղած զեկուցագիրը, որը սակայն ժամանակին անուշադրության մատնվեց: 1918 թ. խոր աշնանը, երբ պատերազմի ավարտից հետո սկսվել էին արծարծվել Արևմտյան Հայաստանը Թուրքական կայսրությունից անջատելու և Հայաստանի մանդատի հարցերը, միայն այդ ժամանակ մտաբերվեց Ռամսեյի զեկուցագիրը: Կառավարության ուշադրությանը ներկայացնելով այդ փաստաթուղթը, արտգործնախարարությունը վերապահում էր, որ նրանում բերված փաստերը կասկած չեն կարող հարուցել, քանի որ զեկուցագրի հեղինակը «երբեք համակրանք չի տածել հայերի նկատմամբ»:

Անցել է ավելի քան մեկ հարյուրամյակ, սակայն Ուիլյամ Ռամսեյի վկայությունը չի կորցրել իր պատմական վաղեմությունը. նա պնդում էր, որ հայերի կոտորածները Թուրքական իշխանությունների կողմից XIX դարի 80-ական թվականներից ի վեր նախապես ծրագրավորված արարք է եղել: «Գնահատելու համար իրադրության այն աստիճանը, որին հաճախ հասցվում են հայերը, երբ չեն հաճոյանում իրենց տերերին ու զգալով մշտապես իրենց սպառնացող վտանգը ընդվզում են,– գրել է Ռամսեյը,– հարկավոր է հասկանալ, թե ինչպիսի բնույթ են կրում Թուրքերի կողմից ջանադրաբար նախապատրաստված կոտորածները: Դա պարզապես չի նշանակում, թե հազարավոր մարդիկ սպանվել են մի քանի օրում հանձնվելով սրի, խոշտանգումների կամ կրակի: Դա չի նշանակում միայն թե նրանց տներն ու խանութներն են թալանվել, իսկ սպանվածները հաճախ կրակի են մատնվել...»: Մի ամբողջ ժողովուրդ մահվան սպառնալիքի տակ է ապրել: Նկարագրելով այն անմարդկային տառապանքները, որոնց ենթարկվել են հուսակորույս արևմտահայերը, և ընդգծելով, որ պատմության մեջ դեռևս չաշխանագրված այդպիսի սարսափելի դաժանությունների ընդունակ են միայն քրեածին կիսախելագար տարրերը, զեկուցագրի հեղինակը գրում է. «Դե պատկերացրեք պաշտոնական իշխանությունների կողմից անպատժելիության խոստումներով խրախուսված այդպիսի հազարավոր հանցագործների՝ չիկացած սպանությունների մոլուցքով, քաջալերված մեկը մյուսի կողմից, որ ավար են ձեռք գցում:

Այս ամենը միասին վերցրած կօգնի ձեզ միայն մասամբ պատկերացնելու Թուրքիայի արևելյան հատվածում իրագործվող կոտորածների պատկերը:

Հայաստանում այս սարսափների ու տառապանքների ամենադաժան նկարագրություններում,– ավելացնում է Ռամսեյը,– չկա ոչ մի չափազանցում: Նույնիսկ Դյումայի նման փայլուն երևակայություն ունեցող և չարի էությունն ըմբռնած Զոլայի նման գրողին չի հաջողվի ոչ մի նկարագրությամբ թողնել այն տպավորությունը, որն ստեղծում են հայերի զանգվածային սպանությունների տեսարանները: Թուրքիայի հայկական հատվածը «Սև երկիր է»: ... Ոչ ոք չգիտի, թե դեռևս որքան խեղանդամված, ընչազուրկ և անարդված հայեր են տանջվում այնտեղ»[4]:

Հայոց կոտորածներին ականատես Էմիլ Դիլլոնն իր հերթին վկայում է, որ «հայկական հինգ վիլայեթներում հիմնվել է կառավարման գաղանային համակարգ», որ հայերի «բնաջնջման ծրագիրը ակներևաբար գործում է կանոնավորապես և հստակ»[3]:

---

3 *Նույն տեղում, էջ 515-517:*

4 Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году. М., 1896, с. 329.

Փարիզի խորհրդաժողովի կողմից Արևմտյան Հայաստան գործուղված Քինդ-Քրեյնի միսիայի ներկայացրած զեկուցագրում (1919 թ.) ևս նշվում է, որ Աբգուլ Համիդի ժամանակաշրջանից ի վեր «հայերի սարսափելի կոտորածները... իրագործվել են կառավարության կանխամտածված ուղղակի գործողությունների շնորհիվ»[5]: Ո՛չ Անգլիայի և ո՛չ էլ եվրոպական որևէ այլ երկրի կառավարություն, որոնք տեղյակ էին Արևմտյան Հայաստանում տիրող այս իրավիճակին, իրական օգնության ձեռք չմեկնեցին հայերին:

Եթե թուրքական իշխանությունները չըմբոշխնեին իրենց կանխամտածված չարագործությունների անպատժելիությունը, նրանք չէին համարձակվի համաշխարհային պատերազմի տարիներին ձեռնամուխ լինել արևմտահայերի իսպառ ընաջնջմանը: Առ այսօր հրապարակի վրա չկան այն պաշտոնական փաստաթղթերը, որոնք կարող են վկայել, որ հայոց ցեղասպանությունը պետականորեն կազմակերպված հանցագործություն է եղել: Դրանց գոյության մասին տեղեկություններ ենք քաղում այլ աղբյուրներից: Բայց փաստ է, որ այդ փաստաթղթերի մի մասը դեռևս 1919 թ. հասու է եղել Հայաստանի մանդատի հետ կապված հարցերի ուսումնասիրության համար Մերձավոր Արևելք մեկնած ամերիկյան միսիային: Այդ միսիայի ղեկավար գեներալ Ջ. Հարբորդը 1919 թ. հոկտեմբերին կոնգրեսին ներկայացրած զեկուցագրից զատ «Միայն ամերիկացիների համար» մակնիշով փակ զեկուցագիր էր ներկայացրել պետական դեպարտամենտին: Այնտեղ մասնավորապես նշվում էր, որ «Թուրքական կառավարության պաշտոնական զեկույցները ցույց են տալիս, որ 1 100 000 մարդ գեպորտացվել է»[6] Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի հայաշատ այլ տարածքներից:

Թուրքական աղբյուրները, կատարված ոճիրի չափերը նվազեցնելու նպատակով, կեղծում են ոչ միայն զոհերի թիվը, այլև Թուրքիայում հայ բնակչության թվաքանակն ընդհանրապես, հանգեցնելով այն 7-8 հարյուր հազարի: ԱՄՆ-ի ազգային արխիվում պահվող վերը բերված փաստաթուղթը բավական կլիներ պատմության թուրք կեղծարարներին մերկացնելու համար:

Բայց չարունակենք: Լոնդոնի «Public Record Office»-ում պահվող պաշտոնական մի հաղորդագրության մեջ (1919 թ.) հավաստի աղբյուրներից տվյալներ են բերվում, ըստ որոնց 1890-ական թվականների կոտորածներից հետո Թուրքիայում բնակվել է դեռևս երկու միլիոն հայ: Այս փաստաթղթի վկայությունը խիստ կարևոր է ճշտելու համար, թե որքան հայեր են զոհվել ցեղասպանության հետևանքով: Ճշտման կարոտ են նաև Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալները, որոնք կանխավ փոքրացրած էին ցույց տրվում բարձր հարկերից խուսափելու համար: Վերը նշված հաղորդագրության մեջ կարդում ենք. «Մերձավորարևելյան խնդիրների այնպիսի մի պրոֆեսիոնալ գիտակ, ինչպիսին է Էդվին Պիարսը, 1911 թվականին հայերի ընդհանուր թվաքանակը գնահատել է 4 մլն, որից, ինչպես նա համարում է, կեսը գտնվում է Թուրքիայում, 1 500 000-ը Ռուսաստանում, իսկ մնացած կես միլիոնը ցրված է ամբողջ աշխարհով մեկ»[7]: Հիմք ընդունելով առարկություն չվերցնող այս փաստաթուղթը, կարելի է պնդել, որ միայն պատերազմի տարիներին Թուրքիայում իրագործված ցեղասպանության հետևանքով զոհված հայերի թիվը կազմել է ավելի քան մեկ ու կես միլիոն մարդ:

---

5 Papers Relating to the Foreign Relations of the United States. The Paris Peace Conference, vol. XII, 1919, p. 810 – 811.

6 The National Archives of the USA (Washington), 860 j, 01/124.

7 Public Record Office (London), 75852/ME 58.

Նկատի առնելով նաև XIX դարի 90-ական թվականներին Արևմտյան Հայաստանում զոհ դարձած 300 հազար հայերին, 1909-1923 թթ. Կիլիկիայում և Թուրքիայի այլ վայրերում կոտորածների հետևանքով զոհվածներին, ինչպես նաև 1920 թ. Արևելյան Հայաստան ներխուժած թուրքական զորքերի կողմից սպանվածներին, կարելի է պնդել, որ թուրքերի կողմից իրագործված հայերի ցեղասպանության հետևանքով զոհվել է առնվազն 2 միլիոն մարդ:

Թուրքիայում հայերի գլխովին բնաջնջման փաստը խոստովանել է դահիճ Թալեաթ փաշան: Դեռևս 1916 թվականին նա դիմել էր Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպանին ցինիկ առաջարկությամբ, խնդրելով նրան ազդելու ամերիկյան ապահովագրական ընկերությունների վրա, որտեղ շատ հայեր ապահովագրել էին իրենց կյանքը, որպեսզի նրանք մեռած հայերի «օրինական ժառանգ» ճանաչեին թուրքական կառավարությանը, «քանի որ հայերը համարյա ամբողջությամբ արդեն մահացել են, չթողնելով ժառանգներ...»[8]: Թալեաթի այդ անպատկառ առաջարկը մերժվեց:

Հայոց ցեղասպանությունը կատարվեց մեծ տերություններից ոմանց հովանավորությամբ և ոմանց լռելյայն համաձայնությամբ: Եթե կայզերական Գերմանիան բացահայտ դրդում ու հովանավորում էր թուրքերին հայաթափ անելու Արևմտյան Հայաստանը (այդ մասին տես ակադեմիկոս Վ. Ա. Միքայելյանի հրատարակած ժողովածուն[9]), ապա Անգլիան ու Ֆրանսիան (նրանց հետ նաև Իտալիան), վախենալով փոքր Ասիայում Ռուսաստանի դիրքերի հնարավոր ուժեղացումից, ամբողջ XIX դարի ընթացքում հարում էին այդ քաղաքականությանը: Դաշնակից տերությունները սթափվեցին, երբ պատերազմում Թուրքիան հայտնվեց գերմանական բլոկում: Լոնդոնում դա դիտվեց որպես բացահայտ դավաճանություն Մեծ Բրիտանիայի նկատմամբ: 1914 թ. նոյեմբերի 9-ին վարչապետ Ասկվիտը հայտարարեց, որ «սուրը պատյան չի դրվի մինչև որ չջախջախվի Օսմանյան կայսրությունը», որ Օսմանյան տիրապետության վերացմամբ «կվերանա այն վարակը, որը շատ սերունդների ընթացքում չորացրել է երկրագնդի գեղեցկագույն անկյունները»[10]:

1915 թ. ապրիլի 24-ին ծայր առած զանգվածային կոտորածները տարածվեցին Արևմտյան Հայաստանով մեկ և ընդգրկեցին նաև Թուրքիայի հայաշատ այլ վայրեր: Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն տագնապալից հեռագրեր հղեց տարբեր երկրների կառավարություններին, խնդրելով միջոցներ ձեռնարկել օրըստօրե ահագնացող կոտորածներին վերջ դնելու համար: Ռուսաստանի կառավարությունը հանձնարարեց իր դեսպաններին աջակցել կաթողիկոսի խնդրանքին: Իսկ Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպանը ապրիլի 27-ին ստացավ իր կառավարության հանձնարարականը՝ ձեռնարկելու արդյունավետ միջոցներ հայերին պաշտպանելու համար: Մորգենթաուի ջանքերը արդյունք չտվեցին: Իր կառավարությանը 1915 թ. հուլիսի 10-ին հղած հեռագրում նա հայտնում էր. «Թուրքական իշխանությունները որոշակիորեն ինձ տեղյակ են պահել, որ ես իրավունք չունեմ խառնվելու իրենց ներքին գործերին»[11]: Երիտթուրքերի կառավարությունը նման պատասխաններ էր տալիս նաև բոլոր այն օտարերկրյա դեսպաններին, որոնք փորձում էին խառնվել թուրքերի «ներքին գործերին»: Եվ նա մնում էր անպատիժ:

---

8 Е. В. Тарле. Сочинения. Т. V, М., 1958, с. 199, 402.

9 Армянский вопрос и геноцид армян в Турции (1913—1919). Материалы политархива МИД кайзеровской Германии. Ереван, 1995.

10 Ллойд Джордж. Правда о мирных договорах. М., 1957, с. 6, 462.

11 Papers Relating to the Foreign Relations of the United States. 1915. Supplement. The World War, Washington, 1928, p. 980.

1915 թ. մայիսի 24-ին Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունները հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որում նշվում էր, որ հայերի կոտորածը Թուրքիայում չի կարելի համարել նրա «ներքին գործը», որ այդ կոտորածն ուղղված է ամբողջ մարդկության և քաղաքակրթության դեմ: Հայտարարության հեղինակները զգուշացնում էին, որ Թուրքիայի կառավարության բոլոր անդամները և նրանց աջակցող այլ պաշտոնյաները անձամբ պատասխանատվություն են կրելու[12]: (Նկատենք, որ առ այսօր Անգլիան և Ֆրանսիան տեր չեն կանգնել իրենց խոսքին, որ միայն Ռուսաստանն է ճանաչել և դատապարտել հայերի ցեղասպանությունը):

Դաշնակից տերությունների հայտարարությունը չկանխեց հայերի հետագա կոտորածները: Երիտթուրքերը աճապարում էին օր առաջ ավարտի հասցնել ամբողջ հայության ոչնչացումը և դրանով վերջ տալ օտար երկրների միջամտությանը իրենց «ներքին գործերին»: Այդ նպատակով Թալեաթ փաշան 1915 թ. սեպտեմբերի 3-ին հրաման արձակեց իսպառ ոչնչացնել երկրում բնակվող հայերին, «նույնիսկ օրորոցում գտնվող մանուկներին»:

Հայերի կոտորածները ուղեկցվում էին հակառուսական հիստերիայով: Դա փորձ էր արդարացնելու իրենց դաժանությունները հայերի նկատմամբ, որոնք դիտվում էին որպես Թուրքիայի տարածքները ներխուժած ռուսների դաշնակիցներ: Ի պատասխան, Նիկոլայ II-ը 1916 թ. օգոստոսի 6-ին սպառնաց, որ «Թուրքերին պետք է վերջ տրվի»: Թե որքանով հաստատակամ էր ռուսական կայսրը, պատմությունը հնարավորություն չընձեռեց համոզվելու: 1917 թ. փետրվարին նա տապալվեց, իսկ հոկտեմբերին իշխանությունն անցավ բոլշևիկների ձեռքը:

Տարածաշրջանում մեծ տերությունների հակասությունները պայմանավորող գործոնները պատերազմի ավարտից հետո չմեղմացան, այլ էլ ավելի սրվեցին և նոր երանգ ստացան Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի հետևանքով: Ռուսաստանը դուրս եկավ Անտանտի բլոկից և դարձավ նրա թիվ 1 հակառակորդը: Այս հանգամանքը էապես փոխեց Հայ դատի նկատմամբ մեծ տերությունների, այդ թվում Ռուսաստանի մոտեցումները: Դաշնակիցները հակված էին կարծելու, թե իրենց ողորմածությամբ ստեղծվող Հայաստանը այլևս չէր կարող հարել Ռուսաստանին (առավել ևս խորհրդային) և 1878 թ. Բեռլինի դաշնագրով ստեղծված ինքնավար Բուլգարիայի նման կծառայեր որպես Ռուսաստանի դեմ ուղղված պատվար: Տոգորված այդ սպասելիքներով, դաշնակից տերությունների գործիչները սկսեցին խոսել Արևմտյան Հայաստանը Թուրքիայի տիրապետության տակից դուրս բերելու անհրաժեշտության մասին: 1917 թ. դեկտեմբերի 21-ին Լլոյդ Ջորջը համայնքների պալատում հայտարարեց, թե «Հայաստանը երբեք այլևս չի դրվի Թուրքերի նողկալի տիրապետության տակ»[13]: Իսկ ԱՄՆ-ի սենատոր Հենրի Լոջը դեկտեմբերի 10-ին առաջ էր քաշել անկախ Հայաստան ստեղծելու գաղափարը: 1918 թ. սեպտեմբերի 6-ին ԱՄՆ-ի կոնգրեսում ավելի վճռական հայտարարությամբ հանդես եկավ Թեոդոր Ռուզվելտը: «Դավաճանություն կլինի քաղաքակրթության հանդեպ Թուրքին Եվրոպայում թողնելը»,– ասաց նա, պնդելով, որ Թուրքական կայսրությունը «պետք է տապալվի, բոլոր սուբյեկտ ժողովուրդները պետք է ազատագրություն ստանան և Թուրքը պետք է քշվի Եվրոպայից: Հայաստանը պետք է ազատ լինի»[14]:

---

12 E s a t U r a s. The Armenians in History and the Armenian Question. Ankara, 1975, p. 869, 872.

13 April 24 Armenian Memorial Day, Boston, 1968, p. 6.

14 Congressional Record, vol. 64, part 3, p. 2494.

Խորհրդային Ռուսաստանը ևս անմասն չմնաց: 1917 թ. դեկտեմբերի 31-ին Ժողկոմխորհուրդը հրատարակեց հրովարտակ «Թուրքահայաստանի» մասին, որով նրան ազատություն էր շնորհվում ընդհուպ մինչև լիակատար անկախություն: Սակայն հրովարտակի իրագործման համար բավարար նախապայմաններ չէին առաջադրվում, չնայած Արևմտյան Հայաստանի զգալի մասը դեռևս գտնվում էր ռուսական զորքերի ձեռքում: Նկատենք նաև, որ դաշնակից տերություններն այդ հրովարտակը դիտեցին որպես բոլշևիկյան պրոպագանդա և հանդես չեկան ի պաշտպանություն նրա: Ավելին, եթե 1916 թ. կնքած Սայքս-Պիկոյի համաձայնագրով դաշնակից տերությունները պարտավորվել էին Ռուսաստանին զիջել նույնիսկ սևծովյան նեղուցները, այժմ ձգտում էին Ռուսաստանին դուրս մղել ոչ միայն Թուրքիայում նրա դրված տարածքներից, այլև Անդրկովկասից: Հենց այդպես ձևակերպեց դաշնակիցների քաղաքական գլխավոր նպատակներից մեկը լորդ Սեսիլը Քերզոնի գլխավորած «Արևելքի կոմիտեի» 1917 թ. դեկտեմբերի 16-ի նիստում: Նրան ձայնակցեց Կլեմանսոն՝ առաջարկելով անմիջապես շրջափակման ենթարկել բոլշևիկյան Ռուսաստանը[15]: Դաշնակիցների ծրագրերում նախատեսվում էր նաև Ռուսաստանի մեկուսացումը Հայկական հարցի լուծումից:

Չնայած այս ամենին, Թուրքիայի հետ Մուդրոսում 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքած զինադադարի պայմանագրում ոչ մի խոսք չէր ասվում Արևմտյան Հայաստանի նախատեսվելիք կարգավիճակի վերաբերյալ: Արևմտյան Հայաստանը Թուրքիայից անջատելու մասին հարցը դեռևս ենթակա էր քննարկման: Այս վիճակը չէր կարող չազդել Հայկական հարցի լուծման հեռանկարների վրա: Դիվանագիտական կուլիսների հետևում սկսվեցին քննարկումներ թե արժե՞ արդյոք անկախ Հայաստան ստեղծել և եթե այո, ինչպիսի քաղաքականություն պետք է վարվեր նրա նկատմամբ:

Թուրքիայի նկատմամբ վարվելիք քաղաքականությունում դաշնակից տերությունների միջև գոյություն ունեցած հակասությունները այն գլխավոր պատճառն էին, որի հետևանքով երկրորդ պլան մղվեց Հայ դատի հարցը, ինչը նպաստեց Թուրքիայի ոտքի կանգնելուն և Հայ դատի տապալմանը:

Պատերազմի ավարտից անմիջապես հետո, 1918 թ. նոյեմբերին, Անգլիայի կառավարությունը դաշնակիցների անունից օկուպացնելով Անդրկովկասը, որդեգրեց մի քաղաքականություն, ըստ որի իրենց կողմից Հայաստանի որպես անկախ պետության պաշտպանությունը պայմանավորում էին նրանով, թե հայերը որքանով ընդունակ կլինեին պաշտպանել իրենց ինքնավար գոյության իրավունքը: Այն հանգամանքը, որ 1918 թ. մայիսին Արևելյան Հայաստանն արդեն հռչակել էր իր անկախությունը, դաշնակիցները լրջորեն չէին ընդունում և Հայաստան ասելով հասկանում էին նախ և առաջ Արևմտյան Հայաստանը:

Հայաստանի նկատմամբ Անգլիայի կառավարության՝ վերը նշված դիրքորոշումը արտացոլում գտավ ռազմական կաբինետի 1918 թ. դեկտեմբերի 16-ին ընդունած որոշման մեջ: Նույն դիրքորոշումն ընդունեցին նաև պատերազմում հաղթած մյուս երկրների կառավարությունները: Այդ դիրքորոշումը հետագայում վճռորոշ դեր խաղաց Փարիզի խորհրդաժողովում, երբ քննարկվում էր Հայաստանի հարցը:

Խորհրդաժողովի կողմից տարածաշրջան գործուղված Քինգ-Քրեյնի և ապա Ջեյմս Հարբորդի գլխավորած միսիաների ուսումնասիրությունների արդյունքները դաշնակիցներին հանգեցրին այն եզրակացության, որ առանց իրենց ռազմական նշանակալից զորամիավորումների օգնության

15 R. U 1 m a n. Anglo-Soviet Relations 1917 — 1921. Vol. II, London, 1968, p. 82, 271; ДВП СССР, т. II, М., 1958, с. 600.

ցեղասպանության հետևանքով հայաթափ եղած Արևմտյան Հայաստանը ի զորու չի լինի պաշտպանել իր անկախությունը, եթե նույնիսկ այնտեղ վերադարձվին կենդանի մնացած բոլոր արևմտահայ գաղթականները: Դժվար լուծելի հարց էր նաև ստեղծվելիք անկախ Հայաստանի սահմանների խնդիրը: Թուրքական իշխանությունները հայերի կոտորածների, ինչպես նաև Արևմտյան Հայաստանում արհեստական կերպով մահմեդական տարրի ավելացումով հեռահար նախադրյալ էին ստեղծել ղրկելու հայերին իրենց հայրենի հողերի նկատմամբ պահանջատիրություն ներկայացնելու «իրավական» հիմքից: Այս հանգամանքը արտացոլում էր գտել Փարիզի խորհրդաժողովում անգլիական պատվիրակությանը 1919 թ. հասցեագրված արտգործնախարարության տեղեկանքում: «Մեծ քանակով հայերի ոչնչացումը Թուրքիայում,– ասված է այդ տեղեկանքում,– բնականաբար պետք է փոխի հայ ժողովրդի (տարածքային) պահանջները, որոնք հիմնված են (Արևմտյան Հայաստանում) ազգային ու ցեղային բաշխվածության վրա, չնայած հայ ղեկավարները իրավացիորեն իրենց պահանջները կհիմնավորեն մինչպատերազմյան տարածքային սկզբունքով»[16]:

Եվ իրոք, ստեղծված նոր պայմաններում, երբ Փարիզի խորհրդաժողովում քննարկվում էր Հայաստանի մանդատի հարցը, շահարկման առարկա դարձավ մահմեդական տարրի գերազանցող առկայությունը Արևմտյան Հայաստանում: Այդ հանդամանքը իր դերը խաղաց նաև ԱՄՆ-ի կոնգրեսում Հայաստանի մանդատի հարցը քննարկելիս (մայիս, 1920 թ.): Չնայած դրան, մի շարք կոնգրեսականներ բարձր դնահատեցին հայերի դերը դաշնակիցների տարած հաղթանակում, նշելով, որ դաշնակիցները մղում էին «հայերին հավատալու, որ նրանք իրենց տեղը պետք է ունենան ազգերի ընտանիքում»[17]: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ի կոնգրեսը հրաժարվեց վերցնել Հայաստանի մանդատը: Սենատոր Քինդը, զգալով այդ քայլի հնարավոր աղետալի հետևանքները, հայտարարեց, որ մանդատի մերժումը «հրավեր կլինի Հայաստանի թշնամիներին՝ հարձակվելու նրա վրա»[18]: Ձենք կարծում, թե դաշնակից տերությունների ղեկավարները, որոնք 1920 թ. օգոստոսի 10-ին իրենց ստորագրությունն էին դրել Հայաստանի անկախությունը հռչակող Սևրի պայմանագրի տակ, չէին գիտակցում այդ վտանգը: Նկատի պետք է առնել, որ հռչակվել էր մի պետության անկախությունը, որի սահմանները դեռևս ոչ ոքի հայտնի չէին: Վերջին հանդամանքը իր հերթին առիթ ծառայեց Ազգերի Լիգային մերժելու Հայաստանը իր կազմում ընդունելու առաջարկը:

Այսպիսով, Սևրի պայմանագրով անկախ Հայաստանը դուրս էր բերվում Թուրքական կայսրության կազմից, սակայն նրա անկախության պաշտպանությունը չէր երաշխավորվում ոչ պայմանագիրը ստորագրած պետությունների և ոչ էլ Ազգերի Լիգայի կողմից:

Ժամանակաշրջանի փաստաթղթերի վերլուծությունը ակամայից տպավորություն է ստեղծում, որ դաշնակիցների առաջին հայացքից իրար հաջորդող անտրամաբանական քայլերը ունեին իրենց տրամաբանությունը գրգռել Թուրքիային զորքեր մտցնելու Հայաստան: Դա կարող էր ռուս-թուրքական ռազմական կոնֆլիկտ առաջ բերել: Այդ դեպքում քեմալական Թուրքիան կդադարեր Արևելքում «համաշխարհային հեղափոխության» պատվար լինելուց, իսկ Խորհրդային Ռուսաստանը կզրկվեր իր ամենահուսալի համարվող դաշնակցից: Լինելով հեռատես ու խորամանկ քաղաքական գործիչ, Մուստաֆա Քեմալը կարողացավ հակամարտող կողմերի նկրտումներն օգտագործել ի շահ Թուրքիայի: 1920 թ. օգոստոսի

16 Public Record Office (London), 75852/ME 58.
17 Congressional Record, vol. LIX, part 8, p. 8064, 8066, 8068.
18 Congressional Record, vol. LXIV, part 3, p. 2497.

14-ին նա հայտարարեց, որ թուրքական զորքերը գրավելու են Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերով Թուրքիային անցած տարածքները: Մուստաֆա Քեմալը համոզված էր, որ ոչ Անտանտի տերությունները և ոչ էլ Խորհրդային Ռուսաստանը չէին խանդարելու իրեն:

Խորհրդային ղեկավարները ձգտում էին Քեմալի միջոցով իրենց հաշիվները մաքրել Անտանտի իրենց դաշնակցի հետ: Մուստաֆա Քեմալն արդեն մեծ ուժ էր ներկայացնում, իսկ ուժեղների հետ դաշնակցում են: Լլոյդ Ջորջն սկսեց խոսել նրա մասին որպես «խիզախ խռովարարի, հոյակապ զինվորի և ընածին առաջնորդի»: Ֆրանսիան և Իտալիան սկսեցին խոսել Սևրի պայմանագրից հրաժարվելու և Քեմալի հետ ուղղակի բանակցություններ սկսելու մասին: Միայն ԱՄՆ-ի պրեզիդենտն էր շարունակում հակաթուրքական տրամադրություններ արծարծել:

Ցեղասպանությունից արյունաքամ դարձած, ռազմական հզոր ուժից ու հուսալի դաշնակիցներից զրկված Հայաստանը մեկուսացվեց: Դա հնարավորություն տվեց Թուրքերին ներխուժել Հայաստանի Հանրապետություն և զավթել նրա տարածքների զգալի մասը: 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրով այդ տարածքներն անցան Թուրքիային: Գոտեպնդված այդ զավթումով, Մուստաֆա Քեմալը ձեռնամուխ եղավ Կիլիկիայում ապաստան գտած հայերի կոտորածին: Մուստաֆա Քեմալը Կիլիկիայում «հայկական օջախ» ստեղծելու մասին դաշնակից տերությունների առաջարկը տապալելու միջոց էր համարում այնտեղ կուտակված ավելի քան 150 հազար հայերին ոչնչացնելը: «Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեն» 1921 թ. մայիսի 25-ին ի լուր աշխարհի տեղեկացրեց, որ Կիլիկիայից ֆրանսիացիների հեռանալու օրերին «թուրքական նացիոնալիստները հայտարարեցին, որ ֆրանսիացիների հետ ունեցած հակամարտություններում ավերված մզկիթներն ու մինարեթները կվերաշինվեն հայերի գանձերով»[19]: Աշխարհը ցնցվեց, սակայն անգրդում մնացին տիրակալները:

Ամիսներ անց (1921 թ. դեկտեմբերին) մեծ հայասեր սենատոր Քինգը ԱՄՆ-ի կոնգրեսին ներկայացրեց մի բանաձև, որով ԱՄՆ-ի և եվրոպական տերությունների պարտքն էր համարում «սանձել Մուստաֆա Քեմալի արյունոտ ձեռքերը» պաշտպանելու համար դժբախտ հայերին, «որոնց միակ մեղքն այն է, որ նրանք քրիստոնյա են և ձգտել են Թուրքիային տալ քաղաքակրթություն և կուլտուրա»[20]: Այս առաջարկը մնաց անարձագանք:

Թվում էր, թե Լոզանի 1922-1923 թթ. տեղի ունեցած խորհրդաժողովը, որը կոչված էր քննարկելու պատերազմի հետևանքով ստեղծված ու դեռևս չլուծված խնդիրները, ինչ-որ կերպ հաշվի կառներ արևմտահայերի ոտնահարված իրավունքները և գոնե մասամբ կբավարարեր նրանց պահանջները: Սակայն դաշնակից տերությունները երեսները թեքեցին հայերից և ձեռք մեկնեցին Թուրքերին: Միայն քաղաքական ասպարեզից հեռանալուց հետո Լլոյդ Ջորջը Լոզանի խորհրդաժողովի արդյունքները դնահատեց որպես «արևմտյան քաղաքակրթության պատմության ամենաստորացուցիչ անցքերից մեկը»: Հայ քաղաքական գործիչները բավականին ուշացած հասկացան, որ դաշնակից տերությունները հայերին տրված խոստումներում ղեկավարվում էին միայն ու միայն իրենց մերկ հաշիվներով: Դաշնակից տերություններին հավատով ծառայած Ալ. Խատիսյանը տասնամյակներ անց դառնացած պետք է ընդուներ, որ դաշնակից տերություններին «հաշիվը բերավ մեզ մոտ: Այդ հաշիվը չարդարացավ, և

19 The National Archives of the USA, 860 j, 4016P 81/165.
20 Congressional Record, vol. LXII, part 1, p. 690, 691.

անոնք հեռացան, թողնելով մեզ ամենադժվարին բոպեին միանգամայն անօգնական և մինակ: Այդ եղավ անոնց դերը»[21]:

Ավելի վաղ այդ դերը նկատելի էր դարձել օտարներին: 1924 թ. ամերիկյան հրապարակախոս Էդուարդ Բայրստադը «Քրիսչիան Հերալդ» թերթում տպագրեց «Մեծ մատնություն» վերտառությամբ հոդված՝ դատապարտելով մեծ տերությունների մատնիչ դերը հայ ժողովրդի նկատմամբ: Իսկ «Դեյլի տելեգրաֆ»-ի թղթակիցը, Լոզանի խորհրդաժողովից հետո դատապարտելով փոքր ազգերի նկատմամբ դաշնակից տերությունների երկդիմի քաղաքականությունը, հույս էր հայտնում, որ այդ պետությունները ստիպված կլինեն պատասխան տալ պատմության առջև:

Այդ պատասխանը առ այսօր չկա ու չկա: Թերևս այդ է պատճառը, որ թուրքական իշխանությունները ջանադրաբար հսկայական միջոցներ են շռայլում պատմության կեղծարարներ վարձելու, միջազգային հանրությանը ապակողմնորոշելու, աշխարհում սկսված հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը կասեցնելու համար:

Հայոց ցեղասպանության դառն հետևանքները առ այսօր առարկայական են: Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում, որ ծայր առավ XIX դարի 70-ական թվականներին և տևեց մինչև 1923 թ., սոսկ երկու միլիոն հայերի զանգվածային կոտորածը չէր միայն: Այն՝ արևմտահայերի դարերով կուտակած հարստության հափշտակումն ու մշակութային արժեքների ոչնչացումը չէր միայն: Այն՝ ցեղասպանությունից մազապուրծների աշխարհով մեկ սփռվելու պատճառը չէր միայն:

Հայոց ցեղասպանությունը ուժասպառ արեց հայ ժողովրդին, նրան զրկեց իր հայրենի Արևմտյան Հայաստանից և Արևելյան Հայաստանի մի զգալի մասից: Չլիներ այդ ցեղասպանությունը, Արևմտյան Հայաստանում հայերի թվաքանակը այսօր նվազագույնս եռապատկված կլիներ:

Հայոց ցեղասպանությունը հայոց պետականության վերականգնման և միացյալ ու անկախ Հայաստան ստեղծելու հույսերի սպանությունն էր:

Հայոց ցեղասպանության տխուր հետևանքներից է նաև հայ-թուրքական հարաբերությունների արդի վիճակը: Բնականաբար, հարց է ծագում, թե ինչպիսի զարգացում պետք է ստանան այդ հարաբերությունները:

Հայ ժողովուրդը երբեք ոխակալ չի եղել, բայց և թույլ չի տվել ոտնահարելու իր ազգային արժանապատվությունը: Եթե թուրքական իշխանությունները ձգտում են քաղաքակիրթ ժողովրդի կեցվածք ընդունել և կանոնավոր հարաբերություններ հաստատել հայ ժողովրդի հետ, պետք է քաջություն ունենան հրապարակավ ճանաչել հայոց ցեղասպանությունը, քաղաքական բանակցությունների միջոցով հատուցել հայ ժողովրդին պատճառած վնասները և քաղաքակիրթ ձևով լուծել տարածքային հարցերը: Իսկ քանի դեռ թուրքական իշխանությունները չեն դիմել այդ քայլին, նրանք ևս դիտվելու են որպես ոճրագործության մեղսակիցներ:

Հայոց ցեղասպանության ծանր փորձություններից հետո էլ հայ ժողովուրդը իր մեջ ուժ գտավ ոտքի կանգնելու և վերաստեղծելու հարյուրամյակներ առաջ կորցրած իր պետականությունը: Իսկ երբ 1920 թ. աշնանը թուրքերը փորձեցին այն ևս ոչնչացնել, այդ արհավիրքի դեմն առնելու միակ ելքը Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելն էր: Հայաստանի Առաջին Հանրապետության առաջին վարչապետ և խորհրդարանի վերջին նախագահ Հովհաննես Քաջազնունին այսպես գնահատեց այդ իրողությունը. «Երախտապարտ պիտի լինենք բոլշևիկնե-

---

21 Ա լ. Խ ա տ ի ս յ ա ն. Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը. Երևան, 1967, էջ 193:

րին. խորտակելով մեզ, նրանք, եթե չասեմ փրկեցին, գեթ ավելի ապահով վիճակի գրին մեր կյանքի գործը: Նրանք եկան մեզ փոխարինելու ճիշտ այն օրհասական ժամին, երբ մենք ինքներս այլևս չէինք կարող տանել մեր գործի ծանրությունը»[22]:

70 տարի հայ ժողովուրդն ապրեց Խորհրդային Միության ժողովուրդներին վիճակված կյանքով: Այդ միության մեջ գանվելը փրկեց Հայաստանը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական նոր ագրեսիային ենթարկվելու վտանգից:

Չնայած ստալինյան բռնատիրության հասցրած վնասներին, մեր ժողովուրդը Հայաստանը վերածեց խոշոր արդյունաբերության, զարգացած գյուղատնտեսության, ծաղկած գիտության ու ազգային մշակույթի երկրի: Եվ ամենագլխավորը. Հայաստանը պահպանվեց որպես պետություն, առանց որի գոյության չէր կարող ծնվել այսօրվա անկախ Հայաստանը:

---

22 Հ ո վ հ. Ք ա ջ ա զ ն ո ւ ն ի. *Դաշնակցությունը անելիք չունի այլևս. Երևան, 1923, էջ 64, 74, 90:*